

www.JobFinder.am ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

_____ Բ. Երևան
(կնքման վայրը)

_____ ամսաթիվ

_____ (կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը)
այսուհետ «Պատվիրատու» ի դեմս՝ _____

_____ (պաշտոնը, ազգանունը անունը)

որը գործում է _____

_____ (կանոնադրության, լիազորագրի կամ այլնի)

հիման վրա մի կողմից, և «Ջոբֆայնդեր» կարիերայի կենտրոն ՍՊԸ-ն այսուհետ՝ «Կատարող», ի դեմս տնօրեն՝ Լիանա Խաչատրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1 Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում, իսկ Կատարողը իրականացնում է Պատվիրատուի աշխատանքային հայտարարության կամ հայտարարությունների տեղադրումը Կատարողի ինտերնետային կայքում և դրանով իսկ ստանձնում է ծառայությունների մատուցումը ինտերնետի միջոցով: Կատարողը համաձայն է մատուցել համապատասխան ծառայություններ՝ ըստ Պատվիրատուի կողմից նախընտրված «ՎԻՍՊ» («VIP») անդամակցության մակարդակի:

2 Կողմերի պարտականությունները և իրավունքները

2.1 Կատարողը պարտավոր է՝

- 2.1.1 Սույն պայմանագրի 1-ին կետում նախատեսված ծառայությունները մատուցել www.jobfinder.am ինտերնետային կայքի (այսուհետ՝ «Կայք») միջոցով:
- 2.1.2 Ապահովել Կայքի միջոցով Պատվիրատուի աշխատանքային հայտարարությունների տեղադրումը և տեսանելիությունը՝ Պատվիրատուի կողմից նախատեսված ժամկետի սահմաններում:
- 2.1.3 Պատվիրատուի ցանկությամբ նրա փոխարեն տեղադրել հայտարարությունը կամ հայտարարությունները՝ նախապես հայտարարության տեքստը Պատվիրատուի հետ համաձայնեցնելով:
- 2.1.4 Պատվիրատուի համաձայնությամբ վերջինիս կողմից կայքում տեղադրվելիք հայտարարության տեքստը վերանայել, խմբագրել, սրբագրել և անհրաժեշտության դեպքում թարգմանել:
- 2.1.5 Պատվիրատուի կողմից կայքում տեղադրված հայտարարությունը հաստատել և Կայքում այն որպես բաց հայտարարություն տեղադրել ամենաուշը մեկ աշխատանքային օրվա ընթացքում, եթե հայտարարության բովանդակությունը համապատասխանում է կայքի ոճին և փոփոխության կարիք չունի: Աշխատանքի հայտարարությունը համարվում է կայքի ոճին համապատասխանող, եթե այն չի պարունակում հերյուրանքներ, զուրկ է գովազդից և չի պարունակում որևէ այլ տեղեկություններ բացի բուն գրագետ ձևակերպված աշխատանքի հայտարարությունից և պահանջներից:
- 2.1.6 Պատվիրատուին ընձեռել մեկ տարվա ընթացքում «ՎԻՍՊ» անդամակցության մակարդակում ընդգրկված անսահմանափակ քանակությամբ հայտարարություններ տեղադրելու հնարավորություն:
- 2.1.7 Տեղադրել Պատվիրատուի կողմից տրամադրված Պատվիրատուի լոգոն և հղումը դեպի Պատվիրատուի կայքէջ Պատվիրատուի յուրաքանչյուր աշխատանքային հայտարարության տեքստում, ինչպես նաև Կայքի գլխավոր էջում՝ համաձայն Պատվիրատուի անդամակցության մակարդակի և մնացած կազմակերպությունների լոգոների հավասարաքանակ տեսանելիության քաղաքականության:

2.2 Կատարողը իրավունք ունի՝

- 2.2.1 Պահանջել Պատվիրատուից վճարել տարեկան անդամակցության համար:
- 2.2.2 Պահանջել Պատվիրատուից վճարել անդամակցության մեջ չընդգրկված ծառայությունների և հայտարարությունների համար:

- 2.2.3 Պատվիրատուի համաձայնությունը նախապես ստանալով՝ խմբագրական փոփոխություններ կատարել հայտարարության տեքստում՝ վրիպակները հեռացնելու և Կայքի ոճին համապատասխանեցնելու նպատակով:
- 2.2.4 Հայտարարության տեղադրման պահից մեկ շաբաթվա ընթացքում Պատվիրատուի կողմից չվճարելու դեպքում հայտարարությունը հեռացնել Կայքից:

2.3 Պատվիրատուն պարտավոր է՝

- 2.3.1 Մեկ տարվա “ՎիՍյՓի” անդամակցության մակարդակի համար վճարել 399,000 / երեք հարյուր իննսուսինը հազար/ ՀՀ դրամ (Ներառյալ հարկերը):
- 2.3.2 Կատարողի կողմից հաշվարկային փաստաթուղթը ներկայացնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել և 5 բանկային օրվա ընթացքում կատարել համապատասխան բանկային փոխանցումները կամ նույն օրը Կատարողին գրավոր տեղեկացնել վճարման հետ կապված առարկությունների մասին:

2.4 Պատվիրատուն իրավունք ունի՝

- 2.4.1 Կայքում տեղադրել անսահմանափակ քանակությամբ հայտարարություններ մեկ տարի ժամկետով:
- 2.4.2 Կայքում անձամբ տեղադրել հայտարարությունը կամ Կատարողին տրամադրել հայտարարության տեքստը՝ Պատվիրատուի փոխարեն այն Կայքում տեղադրելու նպատակով:
- 2.4.3 Կատարողի առաջարկությամբ քննարկել հայտարարության տեքստում կատարվելիք փոփոխությունները և հաստատել հայտարարության տեքստի վերջնական տարբերակը՝ Կատարողի կողմից Կայքում տեղադրելուց առաջ:
- 2.4.4 Օգտվել ռեզյումեի անվճար որոնումից մեկ տարվա կտրվածքով:
- 2.4.5 Անվճար օգտվել Կայքերի գծով ղեկավարների համար նախատեսված գրքերից՝ գրադարանային հիմունքներով մեկ տարվա կտրվածքով:
- 2.4.6 Օգտվել Կենսագրական տվյալների ստուգման և կադրային ծառայություններից 30% զեղչով մեկ տարվա կտրվածքով:

3 Մատուցված ծառայությունների հանձնման և ընդունման կարգը

- 3.1 Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է ծառայությունների հաշվարկային փաստաթուղթը, որում նշվում է՝ Պատվիրատուի կողմից նախընտրած անդամակցության ծառայության մակարդակը, մատուցվելիք ծառայության արժեքը, հայտարարության կամ հայտարարությունների քանակը, յուրաքանչյուր հայտարարության համար սահմանված արժեքը և ընդհանուր վճարվելիք գումարը:
- 3.2 Փաստաթղթում պետք է ներառված լինի ցանկացած այլ տեղեկություն, որի մասին կողմերը պարտավոր են նշում անել կամ որի մասին կողմերը երկուստեք նպատակահարմար են գտել նշել:

4 Ծառայությունների վճարման չափը և կարգը

- 4.1 Կատարողի ծառայությունների արժեքը սահմանվում է սույն պայմանագրի գործողության ամբողջ ժամանակաշրջանի համար և փոփոխման ենթակա չէ:
- 4.2 Կատարողը հնարավոր է համարում գների զեղչային քաղաքականության պարբերաբար կիրառում, բոլոր կիրառվելիք զեղչային քաղաքականությունների մասին (որոնք կազդեն պայմանագրում նշված պարտավորությունների համար վճարվելիք գների վրա), Կատարողը նախապես կտեղեկացնի Պատվիրատուին:
- 4.3 Պայմանագրում նշված ծառայությունների համար սահմանված գումարները ներառում են Կատարողի սույն պայմանագրի պարտավորությունների կատարման հետ կապված բոլոր ծախսերը:

5 Պայմանագրի գործողության ժամկետը

- 5.1 Կատարողը ձեռնամուխ է լինում իր պարտավորությունների կատարմանը սույն պայմանագրի ստորագրման պահից անմիջապես հետո:
- 5.2 Սույն պայմանագիրը ուժի մեջ է ստորագրման պահից և գործում է մինչև ----- ներառյալ:

5.3 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի կողմից այդ մասին մյուս Կողմին մեկ ամիս առաջ նախազգուշացնելով:

6 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը “ՖՈՐՍ – ՄԱԺՈՐ”

6.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7 Այլ պայմաններ

- 7.1 Պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել Կողմերի համաձայնությամբ:
- 7.2 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 7.3 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

8 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կատարող՝ “Ջոբֆայնդեր” կարիերայի կենտրոն ՍՊԸ	<i>Պատվիրատու՝</i>
ք. Երևան 0038; Աբելյան փող. 6/1, Շ 407 սենյակ	
(հասցե)	(հասցե)
ՀՎՀՀ՝ 01242253	ՀՎՀՀ՝
(ստորագրություն, Կ.Տ.)	(ստորագրություն, Կ.Տ.)
(ամսաթիվ)	(ամսաթիվ)